ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման պայմանների վերաբերյալ

ք. Երևան « » _____ 202 թ.

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս համալսարանի ռեկտոր **Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանի**՝ մի կողմից, և Համալսարանի_____ֆակուլտետի _____ մասնագիտության_____կուրսի ուսանող (քաղաքացի) (այսուհետ՝ Ուսանող)_____, մյուս

անուն, հայրանուն ազգանուն

կողմից, կնքեցին սույն պայմանագիրըհետևյալի մասին:

1.Պայմանագրի իրավական հիմքերը

1. Սույն պայմանագրի կնքման իրավական հիմքերն են՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և ՀՀ այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

2.1. Սույն պայմանագրի առարկան Ուսանողի **առկա ուսուցման** ձևով բակալավրի կրթական ծրագրով ուսումնառությունն իրականացնելու ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են (ստորև նշել «այո» կամ «ոչ»): (Ուսանողի կարգավիճակի հետագա փոփոխությունն ամրագրվում է ռեկտորի հրամանով, որի մասին սույն պայմանագրում կատարվում է համապատասխան լրացում):

☐	☐	☐	☐
Անվճար հիմունքներով	Վճարովի հիմունքներով	Տարկետման իրավունքով	Շրջափոխման իրավունքով

2.2. Ուսանողի ուսումնառության նորմատիվ ժամկետը _____ տարի է:

3. Համալսարանի պարտականությունները և իրավունքները

3.1. **Համալսարանը պարտավորվում է.**

3.1.1. Կազմակերպել Ուսանողի ուսուցումը՝ հաստատված Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական պլանների և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրերի.

3.1.2. Իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել ուսումնական գործընթացը, այդ թվում՝ ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը՝ ըստ գործող ուսումնական պլանների:

3.1.3. Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու Համալսարանի գրադարանից, մարզական և առողջարարական կառույցներից, մշակութային-լուսավորչական, սննդի և այլ սոցիալական ծառայություններից.

3.1.4. Բակալավրի կրթական ծրագրով ուսումնառությունը ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած Ուսանողին շնորհել բակալավրի որակավորում և տալ ավարտական փաստաթուղթ (բակալավրի դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով:

3.2. Համալսարանի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները չկատարող, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերող, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վարձը չմուծող, հասարակական կարգն ու կարգապահության կանոնները խախտող Ուսանողը կարող է ենթարկվել տույժերի՝ ընդհուպ մինչև Համալսարանից հեռացվելը:

3.3. Համալսարանը պարտավորվում է ուսանողին տրամադրել **@aspu.am** ենթադոմեյնի տակ գործող էլեկտրոնային փոստի հասցե, որը հնարավորություն կտա ուսումնառության ողջ ընթացքում օգտվելու **Google for Education** համակարգի անվճար ծառայություններից: Ուսուցման ավարտից հետո Համալսարանն իրեն իրավունք է վերապահում ուսանողից հետ կանչելու կամ դադարեցնելու **@aspu.am** ենթադոմեյնի տակ գործող էլեկտրոնային փոստը՝ պահպանելով անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքները:

4. Ուսանողի պարտականությունները և իրավունքները

4.1. Ուսանողի և Համալսարանի միջև հարաբերությունները կանոնակարգվում են Համալսարանի կանոնադրությամբ և սույն պայմանագրով որոշված Ուսանողի իրավունքներով ու պարտականություններով:

4.2. **Ուսանողը պարտավոր է.**

4.2.1. Հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները.

ՆՄՈՇ-ՕՐԻՆԱԿ

4.2.2. Տիրապետել տվյալ մասնագիտության կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքներին և հմտություններին.

4.2.3. Ակադեմիական պարտքեր ունենալու դեպքում հանձնել դրանք ռեկտորատի կողմից սահմանված ժամկետներում և կարգով.

4.2.4. Կատարել Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված իր պարտականությունները.

4.2.5. Խնամքով և հոգատարությամբ վերաբերվել Համալսարանի գույքին.

4.2.6. ***<u>Ուսանողն ի գիտություն</u>*** է ընդունում, որ սույն պայմանագրի **3.2 կետում** նախատեսված պայմանների դեպքում կարող է հեռացվել Համալսարանից:

4.2.7. Սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը: Ուսման վարձը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում Ուսանողը կարող է հեռացվել համալսարանից.

4.2.8. Անվճար ուսուցման կարգավիճակը կորցնելու դեպքում սահմանված ժամկետում և կարգով վճարել **<u>5.1 կետում</u>** նշված ուսման վարձը: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում Ուսանողը կարող է հեռացվել Համալսարանից:

4.2.9. ***<u>Ուսանողը կարող է մասնակցել տվյալ կիսամյակի ընթացիկ (միջանկյալ), ամփոփիչ, կիսամյակային կամ տարեկան քննություններին, ստուգարքներին, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորմանը միայն Հիմնադրամի առջև իր ֆինանսական պարտավորությունները պատշաճ և ժամանակին կատարելուց հետո:</u>***

4.2.10. ***<u>Ուսանողը Հիմնադրամից տեղափոխվելու, հեռացվելու կամ ազատվելու դեպքում կարող է ստանալ իր ուսումնառության վերաբերյալ առաջադիմության թերթիկ, ակադեմիական տեղեկանք կամ ուսումնառության ընթացքում կուտակված կրեդիտների վերաբերյալ այլ փաստաթղթեր միայն Հիմնադրամի առջև ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց հետո</u>***

4.2.11. **@aspu.am** ենթադոմեյնի տակ գործող էլեկտրոնային փոստը օգտագործել միայն ուսումնական նպատակներով՝ չգերազանցելով սահմանված ծավալը:

4.3. **Ուսանողն իրավունք ունի.**

4.3.1. Մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների պահանջները.

4.3.2. Բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ Համալսարանի համաձայնությամբ և այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4.3.3. Մասնակցելու Համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ Համալսարանի կանոնադրությամբ.

4.3.4. Բողոքարկելու Համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3.5. Ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերին, կնքելու պայմանագիր Համալսարանի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

4.3.6. ***<u>Անվճար ուսուցման կարգավիճակ ստանալու դեպքում՝ չվճարելու 5.1 կետում նշված ուսման վարձը</u>***:

5. Ֆինանսական պայմաններ

5.1. Վճարովի հիմունքներով սովորող Ուսանողի ուսման վարձը ուսումնառության ամբողջ տևողության համար կազմում է ____ դրամ

(գումարի չափը թվերով և տառերով)

իսկ յուրաքանչյուր տարվա համար՝ ____ դրամ:

(գումարի չափը թվերով և տառերով)

5.2. Ուսանողի կողմից սույն պայմանագիրը միակողմանի լուծելու կամ ուսանողի հեռացման դեպքերում տվյալ կիսամյակի վճարված ուսման վճարը **<u>չի վերադարձվում</u>**, բացառությամբ այն դեպքերի, երբ ուսանողն առողջական վիճակի պատճառով ուսումը չի կարող շարունակել, որը հաստատված է բժշկական անհրաժեշտ փաստաթղթերով: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին, որը սկսվում է հրամանով ազատվելուց հետո, հաջորդ ամսվա 1-ից: **Հեռացումից <u>(ազատումից)</u>** հետո վերականգնված Ուսանողի ուսման վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված ուսման վարձի չափով, և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր:

5.3. Յուրաքանչյուր ուսումնական տարի ուսման վարձը Ուսանողը կարող է վճարել ըստ կիսամյակների կամ ուսումնական տարվա ամիսների՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին (8 ամիս): Ուսումնական տարին սահմանվում է. **առաջին կիսամյակի համար**՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ, **երկրորդ կիսամյակի համար**՝ փետրվար-մայիս ամիսներ: Մեկ ամսվա ուսման վարձը կազմում է ______________________________ դրամ: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող սոցիալական փաթեթից օգտվող ուսանողների համար վճարման կարգը սահմանվում է օրենսդրական և այլ իրավական ակտերով: Ընթացիկ ամսվա ուսման վարձը ենթակա է վճարման մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը: Առաջին կուրսում հրամանագրման ներկայացվածները (կցագրվածները) ուսումնական տարվա առնվազն առաջին ամսվա ուսման վարձը պետք է վճարեն մինչև ***<u>տվյալ տարվա</u>*** սեպտեմբերի 15-ը:

Նմուշ-օրինակ

5.4. Ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կամ առողջական վիճակի պատճառով ձևակերպված ակադեմիական արձակուրդից հետո վերականգնվող Ուսանողի հետ նոր պայմանագիր չի կնքվում՝ պահպանելով նախկին կարգավիճակը:

5.5. Ուսման վարձը Ուսանողը կարող է վճարել ըստ կիսամյակների կամ ամիսների: Ուսման վարձը վճարվում է բանկային փոխանցման եղանակով՝ Համալսարանի հաշվարկային հաշվին: Ուսանողի ուսման վարձը կարող է փոխանցվել (վճարվել) համալսարան իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից՝ Ուսանողի և տվյալ անձի միջև կնքված պայմանագրի (գրավոր պայմանավորվածության) համաձայն, որի պատճենը կցվում է սույն պայմանագրին:

6. Պայմանագրի ժամկետները

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է մինչև Ուսանողի ուսումնառության ավարտը, բացառությամբ սույն պայմանագրի **<u>6.2 կետում</u>** նշված դեպքերի:

6.2. Ուսանողի հեռացման վերաբերյալ Համալսարանի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: Ուսանողը պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծել, եթե նա ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին դիմում է ներկայացնում տվյալ կիսամյակի քննաշրջանի սկզբից մեկ ամիս առաջ սահմանված ընթացակարգով՝ վճարելով սովորած ժամանակահատվածի համար նախատեսված ուսման վարձը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու դեպքում ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխագուշակել և կանխել:

7.2. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:

7.3. Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ, հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր օրինակից, որոնց մեկական օրինակները հանձնվում են սույն պայմանագրի կողմերին:

8. Կողմերի գտնվելու վայրը, ստորագրությունները և այլ տվյալներ

<u>Համալսարան</u>

Ռեկտոր՝

ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

____

(ստորագրություն, կնիք)

«________»_______________ 202 թ.

Հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17

«Արարատ» բանկ

հ/հ 1510002308480100

ՀՎՀՀ 02527624

<u>Ուսանող</u>

____

(անուն, հայրանուն, ազգանուն)

Անձնագիր սերիա _______ N ___________________

Տրված է «___» _________________________________

Գրանցված է ___________________________________

____

(ստորագրություն)

____

____

(հասցե, հեռախոս)

«________»_______________ 202 թ.

Համաձայն եմ՝ _____________________________

(եթե պայմանագիր կնքելու պահին չի լրացել ուսանողի 18 տարին նաև նրա ծնողի կամ խնամակալի կամ հոգաբարձուի համաձայնությունը)

Լրացումներ՝ կապված Ուսանողի կարգավիճակի փոփոխության հետ

1. ____

2.____

3. ____

ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ